# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԼԵՎՈՆ ՖԱՐՄԱՆՅԱՆԻ ԵՎ ՕՖԵԼՅԱ ԶԱՔԱՐՅԱՆԻ Ք. ՉՈՆՑԻՆ (ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անուն, ազգանուն.**

Լևոն Ֆարմանյան, Օֆելյա Զաքարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**.

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնող

Գիտության քաղաքականության վարչության գիտության քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնի ավագ մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, ք. Չոնցին, 4-9 նոյեմբերի, 2023 թվական

4. **Հրավիրող կողմը**.

ՀԺՀ գիտության և տեխնոլոգիաների նախարարություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն ՀԺՀ «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության (այսուհետ՝ Նախաձեռնություն) գիտական և տեխնոլոգիական փոխանակման 1-ին համաժողովին

6. **Քննարկված թեմաները.**

- Նախաձեռնության էությունը և դրա շրջանակներում գիտական և տեխնոլոգիական փոխանակման համաժողովի կազմակերպման կարևորությունը ու նշանակությունը,
- Նախաձեռնության շրջանակներում գիտության, տեխնոլոգիաների և ինովացիաների ոլորտներում համագործակցության զարգացման հնարավորությունները,
- Նախաձեռնության շրջանակներում Գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում մարդկանց փոխանակման ծրագիրը,
- Նախաձեռնության շրջանակներում Համատեղ լաբորատորիաների ծրագիրը,

- Նախաձեռնության շրջանակներում Տեխնոլոգիաների կայուն զարգացման հատուկ համագործակցային ծրագրի էությունը,
- Նախաձեռնության շրջանակներում Տաղանդավոր երիտասարդ գիտնականների ծրագիրը,
- Նախաձեռնության շրջանակներում Աղքատության հաղթահարում գիտության և տեխնոլոգիաների միջոցով ծրագիրը,
- Նախաձեռնության շրջանակներում Ինովացիայի և ձեռներեցության հատուկ համագործակցության ծրագիրը,
- Նախաձեռնության շրջանակներում բաց գիտության զարգացման հեռանկարները,
- Նախաձեռնության շրջանակներում արհեստական բանականության և այլ առաջադեմ տեխնոլոգիաների զարգացումը,
- Նախաձեռնության շրջանակներում ձեռնարկությունների արդյունաբերական վերափոխումը,
- Չոնցին համալսարանի հետ համագործակցության հեռանկարները:

**7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Այցի ընթացքում մասնակցել են ՉԺՀ «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության գիտական և տեխնոլոգիական փոխանակման 1-ին համաժողովին, որի շրջանակներում հանգամանալից ներկայացվել է ՉԺՀ «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության էությունը և մասնակից երկրների հետ համագործակցության արդյունքում ունեցած ձեռքբերումները: ՉԺՀ «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության գիտական և տեխնոլոգիական փոխանակման 1-ին համաժողովի շրջանակներում մասնակցել են մասնակից երկրների նախարարական հանդիպմանը ու գիտության, տեխնոլոգիաների և ինովացիաների համագործակցության վերաբերյալ կլոր սեղան քննարկմանը: Լևոն Ֆարմանյանը հանդես է եկել համապատասխան ելույթներով՝ ներկայացնելով բարձրագույն կրթության և գիտության ոլորտում Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած բարեփոխումները և ձեռք բերված արդյունքները, ինչպես նաև ներկայացրել է «Ակադեմիական քաղաք» ծրագրի էությունը և այս ուղղությամբ ձեռնարկված քայլերը:

Քննարկումներ են տեղի ունեցել գիտության և տեխնոլոգիաների միջոցով արհեստական բանականության զարգացման, աղքատության հաղթահարման և հիմնական հետազոտությունների զարգացման վերաբերյալ, ինչպես նաև ձեռնարկությունների արդյունաբերական վերափոխման և տեխնոլոգիական ինովացիաների վերաբերյալ:

Այցի ընթացքում երկկողմ հանդիպում են ունեցել ՀԺՀ գիտության և տեխնոլոգիաների նախարարության ներկայացուցիչների, այդ թվում՝ նախարարի առաջին տեղակալի հետ, որի արդյունքում չինական կողմից առաջարկվել է բարձրացնել հայ-չինական հարաբերությունները գիտության և տեխնոլոգիաների ոլորտում նոր մակարդակ՝ զարգացնելով համագործակցության 4+4 ձևաչափը հետևյալ ծրագրերի շրջանակներում՝ Տեխնոլոգիաների կայուն զարգացման հատուկ համագործակցային ծրագիր, Տաղանդավոր երիտասարդ գիտնականների ծրագիր, Գիտության և տեխնոլոգիաների միջոցով աղքատության հաղթահարման ծրագիր, Ինովացիայի և ձեռներեցության հատուկ համագործակցության ծրագիր: Բացի այդ, չինական կողմից առաջարկվեց երկկողմ հարաբերությունները զարգացնել հետևյալ հիմնական սկզբունքներով, առաջինը՝ քաղաքական փոխվստահություն, երկրորդը՝ փոխադարձ պարբերական հանդիպումների իրականացում, երրորդը՝ հարաբերությունների որակական բարելավում:

Միաժամանակ, այց են կատարել նաև Չոնցինի համալսարան և հանդիպում ունեցել համալսարանի գործադիր փոխնախագահի և միջազգային համագործակցության հարցերով տնօրենի տեղակալի հետ, որի շրջանակներում քննարկվել են կրթության և գիտության ոլորտներում երկկողմ համագործակցության զարգացման հեռանկարները:

Գործուղման ընթացքում այց են կատարել Չոնցինի Արդյունաբերական ինովացիոն քաղաք և ծանոթացել առաջադեմ տեխնոլոգիաներին, ինչպես նաև ՀԺՀ «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության նոր միջանցքի գործարկման հեռանկարներին և այս ուղղությամբ արդեն իսկ ձեռնարկված քայլերին:

**8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

ՀԺՀ «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության գիտական և տեխնոլոգիական փոխանակման 1-ին համաժողովի շրջանակներում ՀԺՀ գիտության և տեխնոլոգիաների նախարարության ներկայացուցիչների հետ երկկողմ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել գիտության և տեխնոլոգիաների ոլորտում հայ-չինական հարաբերությունները բարձրացնել որակապես նոր մակարդակ՝ խորացնելով երկկողմ համագործակցությունը ՀԺՀ «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության հետևյալ ծրագրերի շրջանակներում՝ Տեխնոլոգիաների կայուն զարգացման հատուկ համագործակցային ծրագիր, Տաղանդավոր երիտասարդ գիտնականների ծրագիր,

Գիտության և տեխնոլոգիաների միջոցով աղքատության հաղթահարման ծրագիր, Ինովացիայի և ձեռներեցության հատուկ համագործակցության ծրագիր:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հիմք ընդունելով ՀԺՀ «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության գիտական և տեխնոլոգիական փոխանակման 1-ին համաժողովի և Հոնցինի համալսարանի հետ հանդիպման շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունները՝ կձեռնարկվեն համապատասխան քայլեր չինական կողմի հետ բանակցությունները շարունակելու և չինական կողմի առաջարկներին համապատասխան համագործակցության նոր ծրագրերի իրականացման նպատակով:

14 նոյեմբերի, 2023 թվական

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ

ԼԵՎՈՆ ՖԱՐՄԱՆՅԱՆ